



ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	2
3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	8
3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման.....	8
3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման	10
3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի.....	14
4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	17
ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ


Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունվեց Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն¹, որի ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն վերլուծությունը:

Երևանի քաղաքապետի՝ բյուջետային ուղերձի մաս հանդիսացող «2025 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին» զեկույցում նշվում է, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2024-2029 թվականների հնգամյա և 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, 2024 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում 2025 թվականին առաջնահերթ և գերակա են համարվելու այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Համաձայն բյուջեի՝ Երևան քաղաքի 2025թ. եկամուտները կազմելու են 159.4 մլրդ դրամ՝ 2024թ. հաստատված բյուջեով նախատեսվածից 34.8 մլրդ դրամով կամ 27.9%-ով ավելի: Բյուջեի ծախսերը 34.6 մլրդ դրամով կամ 27.7%-ով գերազանցելու են 2024-ի մեծությանը՝ կազմելով 159.5 մլրդ դրամ:

Պլանավորվում է բավական փոքր՝ 87.8 մլն դրամ պակասուրդ:

Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները, մլրդ դրամ



¹ <https://www.yerevan.am/edfiles/iravakan%20akter/....rar>

2. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2025 թվականի բյուջեով նախատեսված են 159.4 մլրդ դրամի ընդհանուր եկամուտներ՝ 2024-ի բյուջեով պլանավորված ցուցանիշից 27.9%-ով կամ 34.8 մլրդ դրամով ավելի: Տարեկան ճշտված պլանի² ցուցանիշի համեմատ աճը կազմում է 29.3% կամ 36.1 մլրդ դրամ:

Ինչպես 2024-ին, 2025թ. բյուջեով ևս ընդհանուր եկամուտների աճը պայմանավորված է «հարկեր և տուրքեր» և «այլ եկամուտներ» խմբերի աճերով, իսկ «պաշտոնական դրամաշնորհների» ծավալն առաջիկա տարում ևս ընթացիկ տարվա հաստատված բյուջեի համեմատ նվազելու է:


Պլանավորվում է, որ բյուջեի սեփական եկամուտները³ կազմելու են 90.2 մլրդ դրամ՝ 2024-ի հաստատված բյուջեով ծրագրվածից 46.7%-ով կամ 28.7 մլրդ դրամով ավելի: Այդ աճին 30.0 տոկոսային կետով նպաստել է «այլ եկամուտների»՝ սեփական եկամուտներ համարվող եկամտատեսակների ընդհանուր մեծության 81.7%-ով ավելացումը և 16.7 տոկոսային կետով՝ «հարկերի և տուրքերի» 26.4% աճը: Ուշագրավ է, որ համաձայն Երևան քաղաքի բյուջեի՝ սեփական եկամուտներն աճելու են 28.7 մլրդ դրամով, մինչդեռ սեփական եկամուտների մեջ մտնող միայն երկու եկամտատեսակների գծով նախատեսվող աճը 31.6 մլրդ դրամ է: Մասնավորապես, հանրային տրանսպորտի ուղեվարձերի բարձրացմամբ պայմանավորված, նախատեսվում է, որ բյուջեի մուտքերը կավելանան 21.3 մլրդ դրամով: Եվս 10.3 մլրդ դրամի աճ նախատեսվում է «հարկերի և տուրքերի» գծով: Այսինքն՝ սեփական եկամուտներ հանդիսացող մնացած եկամտատեսակների գումարային մեծությունը նույնիսկ 4.6%-ով նվազելու է:

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեով պլանավորվում է, որ ոչ սեփական եկամուտները կազմելու են 69.2 մլրդ դրամ՝ 2024 թվականի ցուցանիշից 9.6%-ով կամ 6.0 մլրդ դրամով ավելի:

² 2024 թվականի բյուջեի ճշտված պլանի տարեկան ցուցանիշները վերցվել են 2024թ. բյուջեի ինն ամիսների կատարման հրապարակված հաշվետվությունից՝ <https://www.yerevan.am/uploads/.../.pdf>

³ Երևան քաղաքի բյուջեի սեփական եկամուտներ են համարվում «Հարկեր և տուրքեր» հոդվածի և «Այլ եկամուտներ» հոդվածի բոլոր եկամտատեսակները, բացի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներից»:

Գծապատկեր 2. Երևան քաղաքի բյուջեի եկամուտները, մլրդ դրամ⁴



Համաձայն 2025 թվականի բյուջեի՝ **«հարկերը և տուրքերը»** կազմելու են 49.2 մլրդ դրամ՝ 2024թ. ցուցանիշից 26.4%-ով ավելի: Բյուջեի ընդհանուր եկամուտների 27.9% աճին դրանց նպաստումը կազմելու է 8.2 տոկոսային կետ:

«Հարկերի և տուրքերի» աճին ամենամեծ նպաստումը՝ շուրջ 15.8 տոկոսային կետ, կունենա անշարժ գույքի դիմաց հարկերի 45.7% աճը: Դրանց պլանավորվող ծավալը 2024-ի 13.5 մլրդ դրամից 2025-ին հասնելու է 19.6 մլրդ դրամի: **Աճն առավելապես պայմանավորված է լինելու գույքահարկի հաշվարկման նոր մեթոդաբանության կիրառմամբ:**

Զգալի են նաև տեղական տուրքերի և փոխադրամիջոցների համար գույքահարկի նպաստումները՝ համապատասխանաբար 8.8 և 1.8 տոկոսային կետ: Դրանք նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար 29.6 և 5.2%-ով:

Ակնկալվում է, որ 2025-ին *տեղական տուրքերի* ծավալը կաճի, սակայն աճը 2024-ի նման կտրուկ չի լինի՝ 29.6%, և կկազմի 15.0 մլրդ դրամ: Հիշեցնենք, որ 2024-ին 2023-ի համեմատ այն աճել էր շուրջ 3.6 անգամ՝ 3.2 մլրդ դրամից հասնելով 11.6 մլրդ դրամի: 2025թ. տեղական տուրքերի ծավալի աճն առավելապես պայմանավորված է լինելու համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար գանձվող տուրքերի զգալի՝ 47.1%-ով կամ 3.7 մլրդ դրամով ավելացմամբ:

Համայնքային բյուջե վճարվող պետական տուրքերը գրեթե զրոյական նպաստում ունեն «հարկեր և տուրքեր» ցուցանիշի աճին:

⁴ Գծապատկերը կառուցվել է 2021-2023 թվականների բյուջեների կատարման հաշվետվությունների և 2024 և 2025 թվականների տարեկան բյուջեների հիման վրա:

Պաշտոնական դրամաշնորհների ծավալը շարունակում է նվազել: Այսպես, 2023թ. հաստատված բյուջեով այն կազմել է 22.5 մլրդ դրամ, 2024թ. բյուջեով՝ 29.7%-ով պակաս՝ 15.8 մլրդ դրամ, իսկ 2025թ. պլանավորված է ընթացիկ տարվանից 29.8%-ով պակաս՝ 11.1 մլրդ դրամ: **Այսինքն՝ երկու տարի առաջվա համեմատ դրանք ավելի քան կրկնակի պակաս են պլանավորված:** 2025թ. համար պլանավորվող մեծության 93.5%-ը կամ 10.4 մլրդ դրամը կկազմեն կառավարման այլ մակարդակներից ստացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները, որոնց մեջ շուրջ 9.6 մլրդ դրամը կազմում են պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, 0.8 մլրդ դրամը՝ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաները): **Ինչպես 2024-ին, 2025թ. ևս միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ չեն նախատեսվում:** Հիշեցնենք, որ 2023-ի բյուջեով դրանք շուրջ 1.4 մլրդ դրամ էին:

Ի դեպ, 2025թ. բյուջեով պլանավորվում է, որ պաշտոնական դրամաշնորհների երեք բաղադրիչները՝ **կառավարման այլ մակարդակներից ստացված ընթացիկ և կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհները և միջազգային կազմակերպություններից ստացված կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհները, նվազելու են:** Մասնավորապես, կառավարման այլ մակարդակներից ստացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհները, որոնք կազմում են պաշտոնական դրամաշնորհների գերակշիռ մասը, նվազելու են 30.6%-ով, կառավարման այլ մակարդակներից ստացվող կապիտալ ներքին դրամաշնորհները՝ 24.7%-ով, իսկ միջազգային կազմակերպություններից ստացվող կապիտալ արտաքին դրամաշնորհները՝ 6.1%-ով: Կառավարման այլ մակարդակներից ստացվող ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների կազմում հաշվառվող «պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները», որոնց պլանավորված ծավալը 2024-ի հաստատված բյուջեով 5.7 մլրդ դրամ էր, ընդհանրապես զրոյանալու են, իսկ «պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներն» աճելու են 13.2%-ով կամ 1.1 մլրդ դրամով:

Ինչպես նախորդ տարիներին, 2025 թվականի բյուջեով ևս նախատեսվում է, որ ընդհանուր եկամուտների կազմում ամենամեծ տեսակարար կշիռը՝ 62.2%, կունենան բյուջեի «**այլ եկամուտները**», որոնք կկազմեն 99.1 մլրդ դրամ: Դրանք 2024թ. հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 29.2 մլրդ դրամով կամ 41.8%-ով ավելի են:


«Այլ եկամուտների» աճը հիմնականում պայմանավորված է լինելու ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից համայնքի

բյուջեի եկամուտների՝ 2024-ի համեմատ 67.8%-ով կամ 32.1 մլրդ դրամով աճով: Այդ եկամտատեսակի նպաստումն «այլ եկամուտների» աճին 45.9 տոկոսային կետ է: Ընդ որում, հիշյալ 32.1 մլրդ դրամ աճից 10.8 մլրդ դրամն ապահովվելու է ի հաշիվ պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման համար պետական բյուջեից ստացվող միջոցների 22.7%-ով աճի: Ակնկալվում է, որ դրանք 2025թ. կազմելու են 58.1 մլրդ դրամ:

Ի դեպ, նախատեսվում է, որ «վարչական գանձումները», որը 2024թ. բյուջեի «այլ եկամուտների» աճին ամենամեծ նպաստումն ունեցող եկամտատեսակն է, 2025-ին կնվազի 18.7%-ով կամ 3.5 մլրդ դրամով՝ 5.0 տոկոսային կետով հակադրելով «այլ եկամուտների» աճին: Հիշեցնենք, որ 2024թ. բյուջեով «վարչական գանձումների» աճն ամբողջությամբ պայմանավորված էր տեղական վճարների գծով մուտքերի կտրուկ՝ 2023-ի հաստատված բյուջեի ցուցանիշի համեմատ շուրջ 2.9 անգամ կամ 11.8 մլրդ դրամով ավելացմամբ: Նվազման հիմնական պատճառը «տեղական վճարների» 3.2 մլրդ դրամով կամ 17.7%-ով կրճատումն է: «Տեղական վճարների» մեջ ամենամեծ նվազումը նախատեսվել է այլ տեղական վճարների գծով, ինչն առավելապես պայմանավորված է նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու կամ դրա փոփոխություն կատարելու համար, 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման, ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով շինարարության թույլտվության տեղական վճարների նվազմամբ:

Երևանի վերջին տարիների բյուջեների կատարողականները վստահություն չեն ներշնչում, որ ընթացիկ տարվա համեմատ բյուջեի եկամուտների պլանավորված զգալի աճը հնարավոր կլինի ապահովել: Մասնավորապես, Գծապատկեր 3-ից երևում է, որ 2020թ. ի վեր Երևան քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրումը չի թերակատարվել միայն 2023 թվականին:

Գծապատկեր 3. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կատարողականը, %⁵



*Քանի որ 2024թ. բյուջեի ինն ամիսների կադրաման հաշվետվությունում այդ ամիսների ճշտված պլանը տրված չէ, ինն ամիսների փաստացի մեծությունները համեմատվել են հաշվետվությունում ներկայացվող տարեկան ճշտված պլանի ցուցանիշների հետ:

Ընդ որում, վերոհիշյալ տարիներից ոչ մեկի բյուջեով նախորդ տարվա համեմատ եկամուտների այնպիսի կտրուկ աճ չի պլանավորվել ինչպիսին 2025-ի բյուջեով է նախատեսված: 2025-ին Երևանի բյուջեի եկամուտներն ավելի քան մեկ երրորդով կախված են պետական բյուջեից. «պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները» կազմում են բյուջեի 36.4%-ը: Իսկ առաջիկա տարվա պետական բյուջեի իրատեսականության և հնարավոր խնդիրների վերաբերյալ մտահոգություններին «Լույս» հիմնադրամն անդրադարձել է⁶:

Ուշագրավ է, որ 2025թ. բյուջեով նախատեսվում է, որ ավտոտրանսպորտային միջոցների ավտոկայանատեղիում կայանման համար գանձվելիք վճարների տեսքով եկամուտները կազմելու են 2.1 մլրդ դրամ՝ 2024-ի բյուջեի ցուցանիշից 57.4%-ով կամ 0.8 մլրդ դրամով ավելի: Հիշեցնենք, որ այս «ձեռքբերումը» հնարավոր է դարձել 2024թ. հունվարի 1-ից ավտոկայանման վճարի դրույքաչափերի կտրուկ բարձրացման հետևանքով: 2024-ի բյուջեի նախագծի քննարկման ժամանակ քաղաքային իշխանություններն ամեն կերպ հերքում էին ավտոկայանման դրույքաչափերը ֆիսկալ նպատակով բարձրացնելու մեղադրանքները: Փոխարենը պնդում էին, որ փոփոխությունը նպատակ ունի նվազեցնել ավտոմեքենաների հոսքը և բեռնաթափել քաղաքի կենտրոնը: **Մինչդեռ, հաշվի առնելով, որ փաստացի ո՛չ ավտոմեքենաների հոսքն է նվազել, ո՛չ էլ քաղաքի կենտրոնն է բեռնաթափվել, ստացվում է, որ փոփոխությունների միակ շոշափելի արդյունքը բյուջեի լրացուցիչ եկամուտների հավաքագրումն է:**

⁵ Գծապատկերը կառուցվել է բյուջեի կատարման 2020-2023 թվականների տարեկան և 2024 թվականի ինն ամիսների հաշվետվությունների հիման վրա:

⁶ Ամփոփ վերլուծություն Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի վերաբերյալ, <https://www.luys.am/img/artpic/small/....pdf>, այցելվել է 24.12.2024թ.:

Պատահական չէ, որ 2024-ի ինն ամիսներին, ի տարբերություն այլ եկամտատեսակների գծով արձանագրված ցածր կատարողականի, **ավտոկայանատեղիում կայանման համար գանձվելիք վճարների տեսքով եկամուտների հավաքագրումը գերակատարվել է և 36.0%-ով կամ 490 մլն դրամով գերազանցում է նույնիսկ ամբողջ տարվա համար պլանավորված ցուցանիշին:** Իսկ 2024թ. բյուջեով կայանման համար գանձվելիք վճարները, չնայած դրույքաչափերի կտրուկ աճին, պլանավորվել էին 2023-ի պլանային ցուցանիշից ընդամենը 12.4%-ով կամ 150 մլն դրամով ավելի: **Ստացվում է, որ եթե եկամուտների պլանավորվող մակարդակի ակնհայտ փոքր չափով ավելացման նպատակը վերոհիշյալ մեղադրանքները հերքելը չէր, ապա գործ ունենք պլանավորման լուրջ խնդիրների հետ:** Մասնավորապես, գուցե սխալմամբ ենթադրվել էր, որ դրույքաչափերի կտրուկ աճը հանգեցնելու էր ավտոկայանումների թվի գրեթե նույնախիս կտրուկ նվազման:

Չի բացառվում, որ քաղաքային իշխանությունները 2025-ի բյուջեով նույնպես հույսը դրել են մեկ այլ՝ նմանատիպ «ֆիսկալ օգնականի» վրա. այս անգամ բյուջեի եկամուտների լրացուցիչ աղբյուրը հասարակական տրանսպորտի ուղեվարձերի կտրուկ բարձրացումն է: Ինչպես արդեն նշվեց, նախատեսվում է, որ 2025թ. հունվարի 1-ից ուղեվարձերի կտրուկ բարձրացման հաշվին բյուջեի եկամուտները կաճեն 21.3 մլրդ դրամով: Այս հարցը, ինչպես և սպասվում էր, ստացել է հանրային մեծ հնչեղություն, իսկ քաղաքային իշխանություններն այդպես էլ չեն հիմնավորել, թե ինչո՞ւ է բացատրվում այն հանգամանքը, որ Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի ուղեվարձը շոշափելիորեն ավելի բարձր է լինելու, քան հարևան կամ մոտավորապես նույն վիճակում գտնվող երկրների մայրաքաղաքներում, որոնց մեծ մասը շատ ավելի արդյունավետ համակարգ ունի, քան ակնկալվում է ունենալ Երևան քաղաքում՝ տրանսպորտային բարեփոխումների արդյունքում:

3. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2025 թվականի բյուջեով պլանավորված է, որ ընդհանուր ծախսերը կազմելու են 159.5 մլրդ դրամ՝ 2024 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 34.6 մլրդ դրամով կամ 27.7%-ով ավելի: 2024թ. տարեկան ճշտված պլանի ցուցանիշին այն գերազանցում է 27.5 մլրդ դրամով կամ 20.8%-ով:

3.1. Ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Ընթացիկ ծախսերը կազմում են 149.6 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 93.8%-ը: Դրանք 2024-ի հաստատված բյուջեի ցուցանիշին գերազանցում են 38.6%-ով կամ 41.7 մլրդ դրամով: Իսկ 2024թ. տարեկան ճշտված պլանի համեմատ 2025-ի ընթացիկ ծախսերի պլանային մեծությունը 40.7%-ով կամ 43.3 մլրդ դրամով ավելի է:

Ընթացիկ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է «սուբսիդիաների»՝ 28.1 մլրդ դրամ, «այլ ծախսերի»՝ 5.3 մլրդ դրամ և «սոցիալական նպաստների և կենսաթոշակների»՝ 4.6 մլրդ դրամ աճով: Դրանց նպաստումներն ընթացիկ ծախսերի աճին կազմել են համապատասխանաբար 26.0, 4.9 և 4.2 տոկոսային կետ:


2025-ին, ինչպես նախորդ տարիներին, սպասվում է պարզևատրումների ֆոնդի «տպավորիչ» աճ: Պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար 2025-ի բյուջեով հատկացվող միջոցները 2024-ի համեմատ ավելացել են 46.1%-ով: Հիշեցնենք, որ դրանք 2023 և 2024 թվականների բյուջեներով նույնպես աճել էին՝ համապատասխանաբար 50.6%-ով և 86.6%-ով: Այսինքն՝ սպասվում է, որ պարզևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար հատկացվող մեծությունը երեք տարվա ընթացքում կաճի ավելի քան 4.1 անգամ:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների⁷ 2025թ. պլանային մեծությունը 9.9 մլրդ դրամ է՝ 2024թ. հաստատված բյուջեի ցուցանիշից 41.9%-ով կամ 7.1 մլրդ դրամով պակաս: Ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների հիմնական մասը կազմող կապիտալ ծախսերը նույնպես նվազելու են՝ 24.4%-ով կամ 5.8 մլրդ դրամով և կազմելու են 17.9 մլրդ դրամ: Հատկանշական է, որ 2024թ. ճշտված պլանի համեմատ նվազումը շատ ավելի մեծ է՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններին՝ 61.5% կամ 15.8 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերին՝ 44.7% կամ 14.4 մլրդ դրամ:

⁷ Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի («+» նշանով) և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի («-» նշանով) հանրագումարը:

Ընթացիկ ծախսերի աճը ընդհանուր ծախսերի աճին նպաստելու է 33.4 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների նվազումը դրան հակազդելու է՝ 5.7 տոկոսային կետով:


Գծապատկեր 4. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ, մլրդ դրամ⁸



Կապիտալ ծախսերի՝ 2025թ. բյուջեով ծրագրվող կրճատման հիմնական պատճառներից մեկը, հավանաբար, 2024թ. բյուջեով դրանց ցածր կատարողականն է: Այսպես, 2024-ի բյուջեով նախատեսվել էին 23.6 մլրդ դրամի կապիտալ ծախսեր, ճշտված պլանով դրա ծրագրվող մեծությունը բարձրացվել էր մինչև 32.3 մլրդ դրամ, սակայն ինն ամիսների ընթացքում փաստացի կապիտալ ծախսերը կազմել են ընդամենը 9.9 մլրդ դրամ: **Ընդհանրապես, արդեն մի քանի տարի շարունակ կապիտալ ծախսերի կատարողականի առումով պատկերը բավական անմխիթար է** (Գծապատկեր 5):

⁸ Գծապատկերը կառուցվել է 2021-2023 թվականների բյուջեի կատարման հաշվետվությունների և 2024 և 2025 թվականների տարեկան բյուջեների հիման վրա:

Գծապատկեր 5. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի՝ ճշտված պլանի նկատմամբ թերակատարումը, %⁹



*Քանի որ 2024թ. բյուջեի ինն ամիսների կատարման հաշվետվությունում այդ ամիսների ճշտված պլանը տրված չէ, ինն ամիսների փաստացի մեծությունները համեմարվել են հաշվետվությունում ներկայացվող տարեկան ճշտված պլանի ցուցանիշների հետ:


3.2. Ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Ըստ գործառնական դասակարգման ծախսերը դիտարկվել են հետևյալ խմբերով.

- **Ընդհանուր նշանակության ծառայություններ:** Խմբում ընդգրկված են «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» և «Պաշտպանություն» հոդվածները,
- **Տնտեսական ծառայություններ,** որոնք ներառում են «Տնտեսական հարաբերություններ» և «Շրջակա միջավայրի պաշտպանություն» հոդվածները,
- **Սոցիալական ծառայություններ՝** ներառյալ «Առողջապահություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն», «Հանգիստ, մշակույթ և կրոն» և «Սոցիալական պաշտպանություն» հոդվածները,
- **Կրթություն,**
- **Պահուստային ֆոնդ:**

⁹ Գծապատկերը կառուցվել է բյուջեի կատարման 2020-2023 թվականների տարեկան և 2024 թվականի ինն ամիսների հաշվետվությունների հիման վրա:


Գծապատկեր 6. Երևան քաղաքի բյուջեի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) կառուցվածքը, %



Համաձայն Երևան քաղաքի 2025թ. բյուջեի՝ ընդհանուր ծախսերի 45.0%-ը՝ 71.8 մլրդ դրամ, կկազմեն **տնտեսական ծառայություններին** ուղղվող ծախսերը՝ առաջ անցնելով ընթացիկ տարվա բյուջեի ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող **կրթության ոլորտին** ուղղվող ծախսերից, որոնք 2025թ. ծախսերի կառուցվածքում երկրորդն են՝ 30.6% տեսակարար կշիռով: Դրանց մեծությունը կազմում է 48.7 մլրդ դրամ: Կրթության ոլորտին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում նվազել է՝ 33.8%-ից 30.6%, չնայած որ դրանք 2024թ. բյուջեի համեմատ աճել են 15.5%-ով կամ 6.5 մլրդ դրամով: Պատճառն այն է, որ մնացած բոլոր ծախսային խմբերի (չհաշված պաշտպանության և անվտանգության ծախսերը) աճի տեմպերը գերազանցում են «Կրթություն» խմբի աճի տեմպին:

Տեսակարար կշիռով երրորդ մեծ ծախսային խումբը **սոցիալական ծառայություններին** ուղղվող միջոցներն են՝ 15.1% կամ 24.0 մլրդ դրամ, որոնց հաջորդում են **ընդհանուր նշանակության պետական ծառայություններին** ուղղվող ծախսերը՝ 9.2% կամ 14.7 մլրդ դրամ: Ըստ գործառնական դասակարգման՝ ծախսերի 0.1%-ը կամ 0.2 մլրդ դրամը կազմում են **պաշտպանության և անվտանգության ծախսերին** ուղղվող միջոցները: Ի դեպ, դրանք 2024-ի համեմատ շեշտակի՝ ավելի քան 43 անգամ նվազելու են:

Գծապատկեր 7. Երևան քաղաքի բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ, մլրդ դրամ



Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը 2024թ. հաստատված բյուջեի համեմատ աճելու են 73.4%-ով՝ առավելապես 69.6 տոկոսային կետով՝ պայմանավորված դրա բաղադրիչներից *տնտեսական հարաբերությունների* ոլորտին ուղղվող ծախսերի ավելացմամբ: Դրանք 2024 թվականի հաստատված բյուջեով նախատեսված մեծության համեմատ ավելանալու են 28.8 մլրդ դրամով կամ 94.5%-ով և կազմելու են 59.3 մլրդ դրամ: **Ի դեպ, դրանք 2024-ի բյուջեով նույնպես ավելացվել էին. հաստատված պլանով՝ 2023-ի համեմատ 2.9 մլրդ դրամով, իսկ այնուհետև, ճշտված պլանով՝ ևս 3.2 մլրդ դրամով, սակայն ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում փաստացի կատարվել են տարեկան ճշտված պլանի ընդամենը 26.7%-ը:** Տնտեսական հարաբերություններին ուղղվելիք ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է «տրանսպորտի» և «ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների» գծով ծախսերով: Դրանց գծով նպաստումները տնտեսական հարաբերություններին ուղղվելիք ծախսերի աճին կազմում են համապատասխանաբար՝ 84.2 և 15.6 տոկոսային կետ:

2024թ. հաստատված բյուջեի համեմատ աճելու են նաև «Տնտեսական ծառայություններ» խմբի մյուս բաղադրիչի՝ *Շրջակա միջավայրի պաշտպանության* գծով կատարվելիք ծախսերը՝ 1.6 մլրդ դրամով կամ 14.6%-ով և կազմելու են 12.5 մլրդ դրամ: **Իսկ 2024թ. տարեկան ճշտված պլանի համեմատ դրանք 11.9%-ով պակաս են:** Պլանավորվում է, որ աղբահանման ծառայություններին ուղղվող ծախսերը 2025թ. նախորդ տարվա համեմատ կաճեն 32.1%-ով կամ 1.7 մլրդ դրամով, իսկ կեղտաջրերի հեռացման համար հատկացվելու է 2024-ի պլանային ցուցանիշից 29.4 անգամ պակաս գումար:

Կրթության ուղղվող ծախսերն աճելու են 15.5%-ով կամ 6.5 մլրդ դրամով: Այս խմբում 2024-ի համեմատ 11.4%-ով կամ 1.2 մլրդ դրամով ավելանալու են

միջնակարգ ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերը՝ կազմելով 11.4 մլրդ դրամ: Այս խմբին ուղղվող ծախսերի աճը 7.6 տոկոսային կետով պայմանավորված է «կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններին» հատկացվող միջոցների 3.2 մլրդ դրամով ավելացմամբ: Դրանք, համաձայն 2025թ. բյուջեի, կազմելու են 4.1 մլրդ դրամ: Կրթության ոլորտում կատարվելիք ծախսերի կազմում 0.9 մլրդ դրամով ավելանալու են նախադպրոցական հաստատությունների կառուցմանն ու վերանորոգմանն ուղղվելիք գումարները: Նույն ծախսային դասում է ընդգրկված նաև Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազայի կառուցման՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների համար հատկացվելիք 2.0 մլրդ դրամը: Նախադպրոցական կրթությանն ուղղվող ծախսերը նվազելու են 2.0%-ով կամ 0.4 մլրդ դրամով և կկազմեն 17.9 մլրդ դրամ:

Սոցիալական ծառայությունների ծախսերը կկազմեն 24.0 մլրդ դրամ՝ 2024-ի պլանային ցուցանիշից 16.2%-ով ավելի: Դրանք ընդհանուր ծախսերի աճին կնպաստեն 2.7 տոկոսային կետով: 2024-ի տարեկան ճշտված պլանի համեմատ աճը 3.9% կամ 0.9 մլրդ դրամ է: Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի աճն առավելապես պայմանավորված է լինելու «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» հոդվածով ծախսերի՝ 2024-ի հաստատված բյուջեի համեմատ 3.4 մլրդ դրամով կամ 38.6%-ով ավելացմամբ: 2024-ի տարեկան ճշտված պլանի համեմատ աճը կազմում է 2.5 մլրդ դրամ կամ 25.0%: «Առողջապահություն» և «հանգիստ, մշակույթ և կրոն» ուղղություններով ծախսերը տարեկան ճշտված պլանի համեմատ նվազելու են՝ համապատասխանաբար 30.5%-ով կամ 0.2 մլրդ դրամով և 13.5%-ով կամ 1.5 մլրդ դրամով:

Ընդհանուր նշանակության ծառայություններին ուղղվող ծախսերը 2024թ. հաստատված բյուջեի համեմատ աճելու են 21.7%-ով կամ 2.6 մլրդ դրամով և բյուջեի ընդհանուր ծախսերի աճին կնպաստեն 2.1 տոկոսային կետով: Տարեկան ճշտված պլանի համեմատ աճը 4.1% կամ 0.6 մլրդ դրամ է, իսկ ընդհանուր ծախսերի աճին նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ: Աճը հիմնականում պայմանավորված է երկու ծախսային ուղղությունների՝ «Օրենսդիր և գործադիր մարմինների և պետական կառավարման» և «Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների» համապատասխանաբար 15.6%-ով և 2.3 անգամ աճով: **Ի դեպ, դրանցից երկրորդի գծով տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարողականը 2023թ. կազմել է 61.4%, իսկ 2024թ. ինն ամիսներին՝ ընդամենը 8.7%:**

3.3. Ծախսերը՝ ըստ ծրագրերի

Վերլուծության այս մասում հակիրճ ներկայացված են Երևան քաղաքի 2025թ. բյուջեով նախատեսվող որոշ ծրագրերի վերաբերյալ առավել ուշագրավ փաստերը:

Տրանսպորտային համակարգի՝ հասարակական մեծ հնչեղություն ստացած բարեփոխումների շրջանակներում «Հանրային երթուղային տրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն» և «Վերգեղնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն» ծրագրերով նախատեսվել է 17.3 մլրդ դրամ տրամադրել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին և 1.2 մլրդ դրամ՝ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին:

«Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով նախատեսված գումարը՝ 2.1 մլրդ դրամ, 72.6%-ով պակաս է 2024թ. բյուջեի 7.6 մլրդ դրամ ցուցանիշից: Տրամադրված միջոցներով նախատեսվում է ձեռք բերել 15 հատ տրոլեյբուս, ինչպես նաև շարունակել Զրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքները:

«Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» ծրագրով նախատեսված գումարը 3.0 մլրդ դրամ է՝ 2024թ. բյուջեի ցուցանիշից 16.7%-ով պակաս: 2024-ի տարեկան ճշտված պլանի ցուցանիշից այն պակաս է 1.2 մլրդ դրամով կամ 28.2%-ով: Ի դեպ, այս ծրագրի գծով ընթացիկ տարվա ինն ամիսների կատարողականը տարեկան ճշտված պլանի համեմատ 42.8% է:

«Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» ծախսային դասի «Նախագծային աշխատանքներ» ծրագրով նախատեսվել է 1.2 մլրդ դրամ՝ 2024 թվականի հաստատված բյուջեով նախատեսվածից 775.0 մլն դրամով ավելի՝ պայմանավորված մետրոյի «Զորավար Անդրանիկ» և «Սասունցի Դավիթ» կայարանների միջանկյալ հատվածում նոր վերգեղնյա կայարանի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերմամբ:

Նույն ծախսային դասի «Երևան քաղաքի գլխավոր հափալագծի իրականացման վերլուծություն» ծրագրով 2025-ի բյուջեով դարձյալ գումար է նախատեսված՝ 250.0 մլն դրամ: Ի դեպ, այս ծրագրով տարիներ շարունակ միջոցներ են հատկացվում. մասնավորապես՝ 2023-ի բյուջեով դրանք կազմել են 290.0 մլն դրամ, իսկ 2024-ի բյուջեով՝ 250.0 մլն դրամ: Ընդ որում, 2023թ. բյուջեի կատարման ո՛չ հաշվետվությունում, ո՛չ դրան կից հավելվածներում այս ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: **Իսկ 2024թ. ինն ամիսների հաշվետվությունից երևում է, որ այս ծրագրի իրականացման համար 2024-ի հաստատված բյուջեով նախատեսված 250.0 մլն դրամ գումարը**

տարեկան ճշտված պլանով նվազեցվել է մինչև 170.5 մլն դրամ, իսկ ինն ամիսների փաստացի ծախսը չի հասնում նույնիսկ 0.1 մլն դրամի, այսինքն՝ տարեկան ճշտված պլանի համեմատ կատարողականը 0.6% է:

«Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում» և «Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում» ծրագրերով 2025 թվականի բյուջեով ընդհանուր առմամբ նախատեսվում է հատկացնել 670.2 մլն դրամ՝ 2024թ. պլանային ցուցանիշից 18.7%-ով պակաս:

«Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում» ծրագրով նախատեսվել է 520.3 մլն դրամ՝ 2024-ի պլանային ցուցանիշից 62.0%-ով պակաս:

«Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում» ծրագրով նախատեսվել է 2024թ. բյուջեի ցուցանիշից 24.4%-ով պակաս՝ 295.0 մլն դրամ:

«Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայությունների» համար 2025թ. բյուջեով նախատեսվել են նույնքան միջոցներ, որքան 2024թ. բյուջեով՝ 231.5 մլն դրամ: Ծրագրի իրականացման համար ընթացիկ տարվա բյուջեով 2023-ի համեմատ 38.5%-ով պակաս էր հատկացվել:

«Զբոսաշրջության զարգացում» ծրագրով նախատեսվել է 142.0 մլն դրամ՝ 2024թ. բյուջեի ցուցանիշից 42.4%-ով պակաս:

«Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով 2025-ի բյուջեով ծախսեր չեն նախատեսվել: Հիշեցնենք, որ 2024-ի բյուջեով նախատեսված ծախսերը 2023 թվականի համեմատ 9.9 անգամ նվազել էին:

«Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով 2025թ. նախատեսվել է 2.7 մլրդ դրամ, որը 2024 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշին գերազանցում է 14.4%-ով: Ի դեպ, 2024 թվականին այս ծրագրի գծով ծախսերը հաստատված բյուջեով պլանավորվել էին 2023-ի հաստատված բյուջեի ցուցանիշից 2.3 անգամ կամ 1.3 մլրդ դրամով ավելի, իսկ այնուհետև ճշտված պլանով ավելացվել էին ևս 1.1 մլրդ դրամով՝ 44.7%-ով: Հատկանշական է, որ սա այն սակավաթիվ ծրագրերից մեկն է, որի գծով ընթացիկ տարվա ինն ամիսների ծախսերի կատարողականը համեմատաբար բարձր է՝ տարեկան ճշտված պլանի 62.5%-ը: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ 2025թ. բյուջեով քաղաքային զարգացման առումով կարևոր նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի ֆինանսավորումը նվազել է, կարծում ենք, որ այս ծրագրի գծով ծախսերի աճի անհրաժեշտությունը միանշանակ չէ: Ավելին, տարակուսելի է նաև այն հանգամանքը, որ սա միակ ոչ առաջնային նշանակություն ունեցող ծրագիրը չէ, որի գծով ծախսերի աճը շարունակական բնույթ է կրում: Այսպես, օրինակ՝ «Տոնական արտաքին ձևավորում» ծրագրի գծով հատկացումներն այս անգամ


ընթացիկ տարվա բյուջեի համեմատ կաճեն շուրջ 6 անգամ և կկազմեն 742.8 մլն դրամ: Ի դեպ, դրանք 2024-ի բյուջեում ևս կտրուկ՝ 3.1 անգամ ավելացվել էին: Այսինքն՝ 2025-ին դրանք 18.6 անգամ գերազանցելու են 2023-ի ցուցանիշին:

Ի դեպ, բացի նրանից, որ քաղաքային զարգացման առումով կարևոր նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի գծով պլանավորվող ծախսերը նվազել են, քիչ չեն նաև այնպիսի ծրագրերը, որոնց ֆինանսավորումն ավելացել է, սակայն դրանց գծով 2024թ. փաստացի արձանագրվել է չափազանց ցածր կատարողական: Այդպիսի ծրագրերից է, օրինակ, «Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում (պատվիրակված լիազորություններ)» ծրագիրը, որի համար 2025թ. բյուջեով նախատեսվել է 9.6 մլրդ դրամ՝ մետրոպոլիտենի «Աջափնյակ» կայարանի կառուցման աշխատանքների իրականացման համար: Այս ծրագրի համար 2024թ. բյուջեով ևս գումար էր հատկացվել՝ 4.0 մլրդ դրամ, սակայն այն կտրուկ նվազեցվել էր՝ մինչև 0.8 մլրդ դրամ, իսկ ընթացիկ տարվա ինն ամիսներին ծրագրով ընդհանրապես ծախս չի կատարվել: Գրեթե նույնպիսի վիճակ է նաև «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրի գծով. չնայած նրան, որ 2024թ. բյուջեով ինն ամիսների ընթացքում ծախսվել է տարվա համար նախատեսված 1.2 մլրդ դրամի ընդամենը 1.9%-ը՝ 22.1 մլն դրամ, 2025թ. բյուջեով դարձյալ միջոցներ են հատկացվել, ընդ որում՝ 72.1%-ով ավելի՝ 2.0 մլրդ դրամ: Այս պարագայում, բնականաբար, լուրջ կասկածներ կան, որ 2025 թվականին ևս ծրագրերից շատերը չի հաջողվի ժամանակին և արդյունավետ իրականացնել:

4. ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեով ծրագրվում է 0.1 մլրդ դրամ պակասուրդ՝ 2024թ. հաստատված բյուջեով պլանավորված 0.3 մլրդ դրամի դիմաց:

Գծապատկեր 8. Երևան քաղաքի բյուջեի պակասուրդը, մլրդ դրամ



Բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրը Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետություն» ծրագրի շրջանակներում ստանալիք 592.1 մլն դրամ վարկն է, որից 587.8 մլն դրամն ուղղվելու է 2025թ. բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը:

Ի դեպ, բյուջեի պակասուրդի պլանային ցուցանիշի իրատեսականության վերաբերյալ նույնպես առկա է որոշակի հիմնավոր թերահավատություն. վերջին տարիների փաստացի մեծությունները կտրուկ (առավել հաճախ՝ տրամագծորեն) տարբերվել են պլանավորվածներից: Այսպես, 2018, 2019, 2020, 2021 և 2023 թվականներին պլանավորվել է բյուջեի պակասուրդ, սակայն փաստացի այդ տարիներին արձանագրվել է հավելուրդ: Միայն 2022 թվականն է փաստացի ավարտվել պակասուրդով, սակայն այն ավելի քան կրկնակի մեծ է եղել տարվա համար ծրագրված 4.3 մլրդ դրամ պակասուրդից: 2024թ. բյուջեով նախատեսվել է 0.3 մլրդ դրամ պակասուրդ, ճշտված պլանով այն շեշտակի բարձրացվել է՝ 8.7 մլրդ դրամ, մինչդեռ ինն ամիսների արդյունքներով փաստացի արձանագրվել է հավելուրդ՝ այն էլ բավական մեծ՝ 12.3 մլրդ դրամ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով Երևան քաղաքի 2025թ. բյուջեի վերաբերյալ վերլուծությունը՝ արձանագրենք.

• 2025թ. բյուջեի եկամուտների հարցում քաղաքային իշխանությունները մեծ չափով հույսը դրել են նոր «Ֆիսկալ օգնականի»՝ հասարակական տրանսպորտի ուղեվարձերի բարձրացման վրա:

2024թ. բյուջեով պլանավորված եկամուտների հավաքագրմանն «օգնում են» գույքահարկի հաշվարկման նոր մեթոդաբանությունը և 2024թ. հունվարի 1-ից ավտոկայանման վճարի դրույքաչափերի կտրուկ բարձրացումը: 2025-ին դրանց կավելանա նաև հասարակական տրանսպորտի ուղեվարձերի կտրուկ բարձրացումը, որի հաշվին ակնկալվում է ապահովել 21.3 մլրդ դրամ լրացուցիչ եկամուտ կամ Երևան քաղաքի սեփական եկամուտների գրեթե քառորդ մասը:

Ի դեպ, բյուջեի սեփական եկամուտները բացարձակ մեծությամբ աճելու են ավելի քիչ, քան դրանց մեջ մտնող եկամտատեսակներից միայն երկուսը՝ հանրային տրանսպորտի ուղեվարձերի գումարը՝ պայմանավորված դրանց կտրուկ բարձրացմամբ և անշարժ գույքի դիմաց գանձվող գույքային հարկերը՝ պայմանավորված գույքահարկի հաշվարկման նոր մեթոդաբանության կիրառմամբ: Իսկ սեփական եկամուտներ հանդիսացող մնացած եկամտատեսակների գումարային մեծությունը նվազելու է:

Այսինքն՝ բյուջեի եկամուտներն աճելու են, սակայն այդ աճն առավելապես պայմանավորված չի լինելու քաղաքային իշխանությունների աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ:

• Կապիտալ ծախսերը նվազելու են: Մի շարք ծրագրերի պլանավորման գործընթացը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

Բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների մեծությունը 2024թ. ցուցանիշից 41.9%-ով պակաս է: Այդ ցուցանիշի հիմնական մասը հանդիսացող կապիտալ ծախսերը ևս նվազելու են՝ 24.4%-ով: Չի բացառվում, որ կապիտալ ծախսերի պլանային մեծության կրճատումը պայմանավորված է նաև դրանց՝ նախորդ մի քանի տարիների և ընթացիկ տարվա ինն ամիսների ցածր կատարողականով: Ըստ էության, կապիտալ ծախսերի ցածր կատարողականի տարիներ ի վեր ձևավորված «տխուր ավանդույթը» շարունակվում է:

Փոխարենը պարզևատրումների ֆոնդը, ինչպես նախորդ երկու տարիներին, 2025-ին ևս «տպավորիչ» աճ է ունենալու: Պարզևատրումների,

դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար 2025-ի բյուջեով հատկացվող միջոցները 2024-ի համեմատ ավելացվել են 46.1%-ով: **Ի դեպ, այդ ցուցանիշի ոչ պակաս «տպավորիչ» աճեր էին արձանագրվել նաև 2023-ի և 2024-ի բյուջեներում: Վերջին երեք տարվա կտրվածքով պարզևատրումների ֆոնդը կաճի ավելի քան 4.1 անգամ:**

Քաղաքային զարգացման առումով կարևոր նշանակություն ունեցող մի քանի ծրագրերի գծով ֆինանսավորումը նվազելու է: Մասնավորապես, օրինակ, «Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» ծրագրով նախատեսված գումարը 2024-ի տարեկան ճշտված պլանի ցուցանիշից պակաս է 28.2%-ով: Հատկանշական է նաև այն, որ այս ծրագրի գծով կատարողականը ընթացիկ տարվա ինն ամիսների տարեկան ճշտված պլանի համեմատ 42.8% է: Այդպիսի ծրագրերից արժե հիշատակել նաև «Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում» ծրագիրը, որի համար նախատեսվել է 2024թ. բյուջեի ցուցանիշից 24.4%-ով պակաս՝ 295.0 մլն դրամ, իսկ ինն ամիսներին ծախսվել է տարեկան ճշտված պլանի ընդամենը 12.7%-ը: Մինչդեռ տրանսպորտային բեռնաթափման նպատակի իրականացումը, անկասկած, պայմանավորված է նաև այս ծրագրի արդյունավետ իրականացումով:

Որոշ առաջնային ծրագրերի գծով էլ հատկացվող միջոցները, ճիշտ է, աճելու են, սակայն նախորդ տարիներին դրանց գծով արձանագրվել է խիստ ցածր կատարողական, և դժվար է հավատալ, որ 2025-ին կհաջողվի ապահովել նշված ավելացված ծախսերի կատարումը: Այդպիսի ծրագրերից կարելի է առանձնացնել «Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում (պատվիրակված լիազորություններ)» ծրագիրը, որի գծով (մետրոպոլիտենի «Աջափնյակ» կայարանի կառուցման աշխատանքների իրականացման համար) 2025թ. բյուջեով հատկացվել է 2024թ. հաստատված բյուջեի ցուցանիշից 2.4 անգամ ավելի մեծ գումար, չնայած ընթացիկ տարվա ինն ամիսներին նշված ծրագրով ընդհանրապես ծախս չի կատարվել: Նմանատիպ պատկեր է նաև «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրի գծով: Չնայած 2024թ. ինն ամիսների ընթացքում փաստացի ծախսվել է տարվա համար նախատեսված միջոցների ընդամենը 1.9%-ը, 2025թ. բյուջեով պլանավորվել է ընթացիկ տարվա հաստատված բյուջեի ցուցանիշից 72.1%-ով ավելի:

Փոխարենը կան որոշ ծրագրեր, որոնց գծով ծախսերի նախատեսվող աճն առնվազն տարակուսելի է: Ընդ որում, դրանցից շատերի դեպքում աճը շարունակական բնույթ է կրում: Այսպես, օրինակ՝ «Մշակութային

միջոցառումների իրականացում» ծրագրի ֆինանսավորումը, ինչպես 2024-ին, 2025 թվականին նույնպես ավելանալու է և երկու տարի առաջվա՝ 2023-ի հաստատված բյուջեի ցուցանիշին գերազանցելու է 2.6 անգամ: Ի դեպ, 2024 թվականին, բացի այն, որ այս ծրագրի գծով ծախսերը նախորդ տարվա համեմատ կտրուկ ավելացել էին, ճշտված պլանով դրանք բարձրացվել են ևս 44.7%-ով: Տարակուսելի մեկ այլ օրինակ է «Տոնական-արտաքին ձևավորում» ծրագրի գծով հատկացումների շեշտակի ավելացումը: Այս անգամ դրանք էապես գերազանցել են նույնիսկ անցյալ տարվա «ռեկորդը» և 2025-ին՝ 2024-ի համեմատ աճելու են շուրջ 6 անգամ: Նկատի ունենալով, որ դրանք 2024-ի բյուջեում ևս կտրուկ՝ 3.1 անգամ ավելացվել էին, ստացվում է, որ երկու տարվա ընթացքում դրանք աճելու են 18.6 անգամ:

• Քաղաքային իշխանությունները կաղում են նաև բյուջեի պակասուրդի պլանավորման հարցում:

Ինչպես նախորդ յոթ տարիներին, 2025 թվականի բյուջեով ևս նախատեսվում է պակասուրդ: Այնուամենայնիվ, նկատի ունենալով վերջին տարիների փորձը, պակասուրդի պլանային ցուցանիշի իրատեսականության հարցում առկա է լուրջ թերահավատություն. հիշյալ բոլոր տարիներին պակասուրդի փաստացի մեծությունը կտրուկ (իսկ առավել հաճախ՝ տրամագծորեն) շեղվել է պլանայինից: Մասնավորապես, բացի 2022 թվականից, մնացած բոլոր տարիներին փաստացի ձևավորվել է հավելուրդ: Իսկ 2022 թվականին բյուջեն, ճիշտ է, ունեցել է պակասուրդ, սակայն դրա փաստացի մակարդակն ավելի քան կրկնակի գերազանցել է բյուջեով պլանավորվածին: Ընթացիկ տարում՝ հաստատված բյուջեով նախատեսված պակասուրդը տարեկան ճշտված պլանով բարձրացվել է ավելի քան 31 անգամ և հասցվել 8.7 մլրդ դրամի, մինչդեռ ինն ամիսների արդյունքներով փաստացի արձանագրվել է հավելուրդ, այն էլ բավական մեծ՝ 12.3 մլրդ դրամ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: